«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2025թ. N 36-Լ

ANQA-2025/36

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգի 24-րդ կետի 1-ին ենթակետով, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման Հանձնաժողովը որոշում է.

1. Հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականության խմբագրված տարբերակը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թ. փետրվարի 10-ից:

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

10 փետրվարի 2025թ.
ք. Երևան

Հավելված 1

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային
կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 36-Լ որոշման

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ
/նոր խմբագրությամբ/

1. Քաղաքականության նպատակը

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությունը ներկայացնում է Հավատարմագրման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքի առանցքային սկզբունքները և գնահատման ընդհանուր շրջանակը:

2. Որոշումների կայացման հիմնական սկզբունքները

1) **Կայացրած որոշումների անկախություն և համակարգի զարգացում.** իրականացնել բոլոր ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ կարողությունների անկախ գնահատում ՀՀ կրթական համակարգի կայունությունը խթանող մոտեցումների ապահովման միջոցով:
2) **Հավասարություն.** ապահովել մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների նկատմամբ գնահատման հավասար մոտեցումներ՝ անկախ կազմակերպաիրավական ձևից:
3) **Թափանցիկություն և վստահություն. ապահովել** գործընթացների և արդյունքների թափանցիկությունը, շահակիցների փոխադարձ վստահությունը՝ ուղղված համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և միջազգային ճանաչմանը:
4) **Համապատասխանություն.** որոշումների կայացման ժամանակ հաշվի առնել մասնագիտական կրթություն ապահովելու (ՈԱՇ-ին համապատասխան որակավորումների արժանահավատ շնորհում) և ՄՈՒՀ-ի զարգացման համատեքստը:

3. Հանձնաժողովի ակնկալիքները

Հավատարմագրման հանձնաժողովը մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունից ակնկալում է.

1) **Իրականացվող բոլոր կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավման ռազմավարություն, որն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհման արդյունք.**

   ա) Արդյո՞ք ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունն ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱՇ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը:

2) **Արդյունքահեն կառավարում, որն ապահովում է կայունություն, բարելավում և զարգացում.**

ա) Որքանո՞վ իրականացվում է գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարում,

բ) Արդյո՞ք առկա են տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ և համակարգեր՝ պլանավորման, ինչպես նաև մշտադիտարկման նպատակով,

գ) Արդյո՞ք ՄՈՒՀ-ի ղեկավարներն առաջնորդվում են հաստատված ռազմավարական ծրագրերով և հաշվետու են շահակիցներին ռազմավարության ներդրման համար,

դ) Արդյո՞ք կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովման համակարգը և դրա զարգացումը:

3) **Ինստիտուցիոնալ կառավարման վստահություն որակի ներքին ապահովման համակարգին՝ շարունակական անկախ, գնահատման իրականացում և բարելավումների մշտադիտարկման ապահովում**.

ա) Արդյո՞ք ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտական, ստեղծագործական միջավայրը, միջազգայնացումը, արտաքին կապերը և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացման և առաջխաղացման հնարավորություն են ստեղծում ՄՈՒՀ-ի համար:

4. Գնահատման ուղենիշները

Ինստիտուցիոնալ կարողությունների հիմնական տաս չափանիշները խմբավորվում են հետևյալ երեք ուղղություններով և տիրույթներով.

1) Հետևյալ 3 չափանիշները դիտարտվում են որակավորումների արժանահավատ շնորհում ապահովելու տեսանկյունից.
   ա) Մասնագիտության կրթական ծրագրեր
   բ) ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ
   գ) Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ
2) Հետևյալ 3 չափանիշները դիտարկվում են ՄՈՒՀ-ի ռիսկերի կառավարման, բարելավման և զարգացման հնարավորությունի տեսանկյունից.
   ա) Առաքելություն և նպատակներ
   բ) Կառավարում և վարչարարություն
   գ) Որակի ապահովման ներքին համակարգ
3) Հետևյալ չորս չափանիշները դիտարկվում են երկարաժամկետ զարգացման տեսանկյունից.
   ա) ուսանողներ
   բ) հետազոտություն և զարգացում
   գ) հասարակական պատասխանատվություն
   դ) արտաքին կապեր և միջազգայնացում:

Գնահատման ժամանակ առանցքային է որակավորումների արժանահավատ շնորհումը և դրա շուրջ է կառուցվում Հանձնաժողովի որոշման նախագիծը: Գնահատման արդյունքում Հանձնաժողովը կարող է եզրահանգել, որ ՄՈՒՀ-ը լիովին, հիմնականում կամ մասամբ է բավարարում Հանձնաժողովի սույն քաղաքականությամբ սահմանված ակնկալիքներին հատկապես որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից՝ ըստ Աղյուսակ 1-ի:

Շնորհվում է 6 տարով հավատարմագրում	**Շնորհվում է 4 տարով հավատարմագրում**	**Շնորհվում է 4 տարի պայմանով հավատարմագրում**	**Մերժվում է**
1. Համապատասխանում է սույն քաղաքականությամբ սահմանված ակնկալիքներին	2. Էապես համապատասխանում է սույն քաղաքականությամբ սահմանված ակնկալիքներին	2. Մասամբ է համապատասխանում սույն քաղաքականությամբ սահմանված ակնկալիքներին	3. սույն քաղաքականությամբ սահմանված ակնկալիքներն արդարացված չեն
1.1 ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում	2.1 հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում	3.1 Առկա են հիմնարար խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են	4.1 որակավորումները արժանահավատ չեն շնորվում
1.2 կառավարման և որակի ապահովման համակարգերն ապահավում են կայունություն և զարգացում	2.2 կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են, որ բարելավվի որակավորումների շնորհման արժանահավատությունը	3.2 կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը	4.2 կառավարումն ու որակի ապահովման համակարգերը հնարավորություններ չեն ստեղծում առաջխաղացման
1.3 միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհամանը	2.3 միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհամանը	3.3 միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն առայժմ չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը	4.3 միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհամանը, չկան զարգացման նախադրյալներ
1.4 առկա են առաջխաղացման	2.4 առկա են միայն մասնակի թերացումներ,	3.3 առկա են առանցքային թերություններ	4.3 առկա են առանցքային թերություններ

օրինակներ, կառավարման համակարգն աջակցում է փոփոխություններին:	որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:	որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև բարելավման միտումներ:	որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից

4. Հավատարմագրման մասին որոշման կայացման հենքը

1) Հանձնաժողովը հավատարմագրման վերաբերյալ որոշում կայացնելիս ծանոթանում է ուսումնական հաստատության հավատարմագրման գործընթացի փաստաթղթերի փաթեթին, որում ներառված են.

   ա) հաստատության ինքնավերլուծությունը,

   բ) փորձագիտական զեկույցը, որտեղ ներկայացված է ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերի և բարելավման կարիք ունեցող կետերի վերլուծությունը,

   գ) փորձագիտական զեկույցի վերաբերյալ հաստատության դիտողությունները և առաջարկությունները,

   դ) փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման հաստատության ներկայացրած ծրագիրը և ժամանակացույցը,

   ե) ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի եզրակացությունը,

   զ) ամփոփ եզրակացությունը, որը պատրաստվում է Հավատարմագրման հանձնաժողովի երեք անդամների (Դիտարկող համձնախումբ) կողմից, ովքեր մանրամասն ուսումնասիրում են փաստաթղթերը, հանդիպում են հավատարմագրման գործընթացի համակարգողի, փորձագիտական խմբի և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ, վերջնականացնում նրանց դիրքորոշումը և առարկությունները:

Դիտարկող հանձնախմբի ամփոփ եզրակացությունը ներառում է չափանիշների գնահատումների վերաբերյալ դիրքորոշման և վերագնահատման հիմնավորումներ, ինչպես նաև հիմնավորված առաջարկ հավատարմագրման շնորհման և որոշման եզրակացության վերաբերյալ:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիտարկող հանձնախմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է իր ամփոփ եզրակացությունը, որը քննարկվում է և ընդունվում է վերջնական որոշում բաց քվեարկության արդյունքում:

5. Առնչվող այլ փաստաթղթերի ցանկ

1) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներ»:
2) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր

իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»:

3) «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կետնրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ»:

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

10 փետրվարի 2025 թ.
ք. Երևան